ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

ԳԱՌՆԻԿ ՇԱԽԿՅԱՆ
Ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր

ԴԱՍԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԳԻՐԸ

Հայկական ճարտարապետության գիտական ուսումնասիրության ռահվիրա Թորոս Թորամանյանը այս բնագավառում իր հսկայական և անգնահատելի ներդրումը համեստորեն որակել է որպես հայկական ճարտարապետության գանձարանը տանող մի արահետի բացում և կանխատեսել, որ կգա ժամանակ, երբ այդ արահետը կդառնա լայնահուն պողոտա: Եվ իրոք, չանցած մի քանի տասնամյակ, բացվեց այդ պողոտան՝ թորամանյանական այդ դպրոցն անցած, նրա զորեղ ավանդներին հավատարիմ հետազոտողների մի սերնդի ջանքերով:

Թորամանյանական դպրոցի հետևողական շարունակողների և զարգացնողների առաջին շարքում շուրջ յոթ տասնամյակ հաստատորեն քայլեց ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վարազդատ Հարությունյանը, ում գիտական բեղուն և արգասաբեր գործունեությունը հայկական ճարտարապետության ուսումնասիրության բնագավառում ինքնամոռաց նվիրումի, գեղեցիկի պաշտամունքի, պարտքի և պատասխանատվության գիտակցման հազվագյուտ դրսևորում է: Երբ ծանոթանում ես գիտնականի անցած կյանքի ուղուն, կարծես քո առաջ հառնում են Խորհրդային Հայաստանի տարեգրության էջերը, տեսանելի է դառնում հայ ժողովրդի անցած դժվարին ճանապարհը:

Թիֆլիսի 82-րդ աշխատանքային միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո 1927 թվականից որպես գյուղական ուսուցիչ պաշտոնավարել է Լոռու Շնող և Արճիս գյուղերում՝ մասնակից դառնալով նաև դրանց սոցիալական վերափոխման և անգրագիտության վերացման գործին:

Լոռին իր չքնաղ բնությամբ հեքիաթային աշխարհ բացեց նրա առջև: Անհամար հոյակապ կոթողները գերեցին նրան, սեր ներշնչեցին հայ ժողովրդի մշակույթի հանդեպ: Եվ այդ սերը 1931 թվականին նրան տարավ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետության բաժինը, որտեղ ուսումնառության վեց տարիները եղան ճարտարապետական արվեստի գաղտնիքները ճանաչելու, գիտության ծարավը հագեցնելու, տքնաջան ուսումնառության ժամանակաշրջան: Տակավին ուսանող էր, երբ դրսևորվեցին նրա օժտվածությունն ու ունակությունները ճարտարապետական նախագծման բնագավառում: Թվում էր, թե ապագան կանխորոշված է, սակայն, ինչպես հետագայում իր ուսուցիչներից Միքայել Մազմանյանը պիտի գրեր, «Վարազդատը իրեն «զոհաբերեց» որպես նախագծող ճարտարապետ՝ հանուն պատմական հայ ճարտարապետության ուսումնասիրության գործի»: Չգիտենք, թե դրանով ինչ կորցրեց հայ ճարտարապետությունը, բայց որ պատմական հայ ճարտարապետությունը գտավ իր հետազոտողին

դրա առհավատչյան այն բազմաբովանդակ, տևական գործունեությունն է, որ ծավալել է Հարությունյանը՝ հայ ճարտարապետության պատմության, պատմական հուշարձանների պահպանման և վերականգման, հայ ժողովրդի ճարտարապետական ժառանգության պրոպագանդման ուղղությամբ:

Ուսումնառության և հետագա տարիներին նա ակտիվ կերպով մասնակցում է ճարտարապետական հուշարձանների ուսումնասիրման, չափագրման, հնագիտական պեղումների աշխատանքներին, որոնց արդյունքները, նաև հայկական ճարտարապետության վերաբերյալ հարուստ գիտելիքները, միահյուսվելով աշխատասիրության և համակողմանի օժտվածության հետ, պայմանավորեցին ապագա գիտնականի հաջո

Վ. Հարությունյանը Մայր Աթոռի ճարտարապետա-շինարարական հանձնաժողովի անդամների հետ՝ գլխավորությամբ Վազգեն Վեհափառի

ղությունները:

Ողջ գործունեության ընթացքում նա հավատարիմ մնաց հետազոտողի իր ընտրած ուղուն՝ սթափ ըմբռնելով նաև մեր օրերում պատմական հայ ճարտարապետության կարևոր նշանակությունը՝ այն դիտելով որպես շտեմարան, ոգևորության աղբյուր՝ ստեղծագործական խիզախումների, կոնստրուկտիվ հնարամտության, գեղարվեստական կատարելության հասնելու համար: Ճարտարապետական հուշարձանների ուսումնասիրությունը, նրանց վերլուծությունն ու վերծանումը եղան Հարությունյանի տարերքն ու կյանքի նպատակը:

Դեռևս գիտահետազոտական գործունեության շեմին նրա կատարած ուսումնասիրությունները՝ նվիրված Դվինի պեղումների (1937-1941 թթ.) արդյունքներին, Արուճի եկեղեցու թվագրմանը և այլն, աչքի են ընկնում հարցերի ընդգրկման խորությամբ՝ ազդարարելով օժտված և գիտական բարձր պատրաստվածությամբ երիտասարդ գիտնականի ասպարեզ մտնելը:

Հարությունյան-գիտնականի գործունեությունը բնորոշվում է արդյունավետությամբ և ընդգրկում է հայկական ճարտարապետության լայն շրջաններ և բնագավառներ, որոնցից մեկն առավել նախասիրել է գիտնականը: Դա միջնադարյան աշխարհիկ ճարտարապետությունն է, որի ուսումնասիրության ասպարեզում նա ունի անուրանալի վաստակ: Գիտնական-հետազոտողին չվախեցրին ուսումնասիրության փորձի սակավությունը և աշխարհիկ շենքի անբավարար պահպանվածությունը, ընդհակառակը, պարտավորեցրին, քանզի մոտալուտ էր դրանց մոռացման մատնվելու վտանգը:

Հայաստանի աշխարհիկ շենքերի և կառուցվածքների ուսումնասիրության արդյունքներն ամփոփող հրապարակումները՝ «Դվինի 5-7-րդ դդ. ճարտարապետական հուշարձանները», «Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները», մեծաթիվ հոդվածները գիտական և պարբերական մամուլում զգալի ավանդ են ճարտարապետության տարեգրության մեջ: Դրանցում հեղինակը հանգում է արժեքավոր և նորարարական եզրակացությունների, բացահայտում Հայաստանի աշխարհիկ ճարտարապետության զարգացման միտումները, որոնք արտահայտվել են գլխավորապես ժողովրդական ճարտարապետության ավանդույթներից մշտապես հարստանալու, նրա ձևերը և հնարքները ստեղծագործորեն մշակելու և մոնումենտալ ճարտարապետության մեջ վերաիմաստավորելու ուղղությամբ:

Գիտնականը առանձին հուշարձանների ուսումնասիրությունը հաջողությամբ զուգակցել է տեսական ընդհանրացումների, հայկական ճարտարապետության շրջափուլերի բնութագրման և հատկանշական կողմերի բացահայտման հետ՝ վերլուծելով մեր նյութական մշակույթի ուրույն և հարուստ անծանոթ շատ էջեր: Հեղինակի «Հայկական ճարտարապետության հուշարձաններ» (Ս. Սարաֆյանի հետ, ռուս.) գիրքը նյութի ընդգրկման հարստությամբ, համակարգված շարադրանքով հայկական ճարտարապետության իմացության համար ունի կարևոր արժեք և ավելի քան հինգ տասնամյակ է, ինչ հանդիսանում է ուսումնական ձեռնարկ ճարտարապետության պատմության համար:

Հարությունյանն առաջիններից էր, որ հայկական ճարտարապետության ծագումնաբանության և ժառանգորդության խնդիրները դարձրեց քննության առարկա՝ բացահայտելով հայկական ճարտարապետության առաջացման և զարգացման նախադրյալները՝ ամբարված տեսնելով դրանք հայրենի հողի և ավանդույթների ընդերքում:

Գիտնականը զգալի ներդրում է կատարել հայ ժողովրդի գործունեության պակաս ուսումնասիրված նաև մեկ այլ բնագավառում՝ քաղաքաշինական ժառանգության ուսումնասիրության գործում՝ ստեղծելով «Հին և միջնադարյան Հայաստանի քաղաքաշինությունը» աշխատությունը, որի համար հեղինակին շնորհվեց ճարտարապետության դոկտորի գիտական աստիճան (1964 թ.):

Հայկական պատմաճարտարապետական հուշարձանների ուսումնասիրության գծով աչքի ընկնող հրապարակումներից են նաև «Հայկական ճարտարապետության մի քանի հարցերի մասին» (Բ. Առաքելյանի և Ստ. Մնացականյանի հետ) «Հայաստանի հուշարձանները» (Մ. Հասրաթյանի հետ), «Էջմիածին» գրքերը:

Ընդլայնելով իր հետազոտությունների ոլորտը՝ Հարությունյանը քիչ ջանքեր չի գործադրել Խորհրդային Հայաստանի ճարտարապետության և քաղաքաշինության պրակտիկայի ընդհանրացման գծով, որի արդյունքներն ամփոփված են «Սովետական Հայաստանի ճարտարապետությունը» (Կ. Հովհաննիսյանի հետ), «Երևան» (Մ. Հասրաթյանի և Ա. Մելիքյանի հետ), «Սովետական Հայաստանի ճարտարապետությունը» (նույն հեղինակների հետ) գրքերում և մեծաթիվ հոդվածներում, որոնցում հայ ճարտարապետության պատմության և քաղաքաշինության գիտական մշակման հետ միասին փորձ է արվել ճշգրտելու ժամանակագրական պարբերացումը, վերլուծելու և գնահատելու անցած ուղին՝ սերտորեն շաղկապված երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքաշինական զարգացման հետ:

Գիտնականը նաև ճարտարապետության ընդհանուր պատմության խոր գիտակ էր, որի արտահայտությունն է «Հին աշխարհի ճարտարապետությունը» ուսումնական ձեռնարկը: Որպես հայկական ճարտարապետության պատմության լավագույն մասնագետներից մեկը՝ նա մասնակցել է «Հայ ժողովրդի պատմության», «Հայկական սովետական հանրագիտարանի» հատորների ստեղծման աշխատանքներին:

Նրա գիտական գործունեությունը սերտորեն միահյուսված էր երկարամյա մանկավարժական աշխատանքի հետ: Հարությունյան դասախոսին հատուկ էին նյութի խորիմացությունը, հայրենասիրական ներշնչանքը, հյութեղ լեզուն և պատկերավոր խոսքը: Մոտ 50 տարի գլխավորելով Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետության ամբիոնը՝ դաստիարակել է արժանի հերթափոխ:

Մեծ էր նրա ներդրումը մեր երկրում և արտասահմանում հայ ժողովրդի ճարտարապետական ժառանգության պրոպագանդման, Թ. Թորամանյանի գիտական ժառանգության, խորհրդահայ ճարտարապետության լավագույն ստեղծագործությունների ժողովրդականացման ուղղությամբ:

Գիտահետազոտական և մանկավարժական գործունեության հետ միասին գիտնականը մշտապես զբաղվել է ակտիվ հասարակական գործունեությամբ՝ լինի դա Հայաստանի ճարտարապետների միությունում, Պատմական հուշարձանների պահպանման թե «Գիտելիք» ընկերությունում:

Հարությունյանի գիտական եզրահանգումների հենքը հիմնականում ճարտարապետական հուշարձաններն էին, նրանց փաստական տվյալները: Նա ոչ միայն վերցնում էր հուշարձաններից, այլև բաժին էր հանում նրանց՝ ներդրում կատարելով վերականգման և բարենորոգման գործում: Դրան նա իր անմիջական մասնակցությունը բերում էր ոչ միայն որպես այդ բնագավառի կազմակերպիչներից մեկը, այլև մասնագիտական հսկողությամբ, գիտական խորհրդատվությամբ, որի հանրագումարն է «Ճարտարապետական հուշարձանների վերականգնումը» աշխատությունը (Արտ. Գրիգորյանի և Գ. Նալբանդյանի հետ):

Հայ ճարտարապետության ուսումնասիրության արգասաբեր շրջան հանդիսացան հատկապես 1970-80-ական թվականները, երբ հայրենի գիտնականների ջանքերը զուգորդվեցին արտերկրի մի շարք հայագիտական կենտրոնների և առանձին գիտնականների հայանպաստ գործունեության հետ՝ դրսևորվելով համատեղ միջազգային գիտաժողովների գումարմամբ, հայ ճարտարապետության հուշարձաններին նվիրված ուսումնասիրությունների երևան գալով, հատկապես Թուրքիայի, Իրանի և այլ երկրների վարչական տարածքներում գտնվող հայկական ճարտարապետության վերաբերյալ փաստական նյութի հարստացմամբ: Այդ շրջանում բեղուն եղավ նաև Վ. Հարությունյանի ստեղծագործական վաստակը՝ նշանավորվելով մի քանի ծանրակշիռ աշխատությունների երևան գալով, ինչպես «Հայ ժողովրդի քարակերտ տարեգրությունը», «Հայկական ճարտարապետության պատմությունը»: Դրանցում ներկայացված է հայ ճարտարապետության զարգացման գործընթացի համապարփակ շարադրանքը՝ շաղկապված երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հետ:

Վ. Հարությունյանն անցավ կյանքի երկար և տևական ճանապարհ՝ մշտապես գտնվելով ճարտարապետական իրողությունների հորձանուտում և ճարտարապետության ու մշակույթի գործիչների միջավայրում, ինչն աղբյուր հանդիսացավ փաստագրական-հուշագրական հարուստ նյութի ներկայացման, որը մարմնավորվեց ուշագրավ պրակների շարքով՝ «Նախնյաց ոտնահետքերով», «Բոսֆորի և Մարմարայի ափերով», «Անմոռաց հանդիպումներ», «Կյանքիս քառուղիներում», «Աշխարհի ճամփաներով», «Արվեստակից ժամանակակիցներս»:

Վարազդատ Հարությունյանի գիտահասարակական գործունեությունը 1940-ական թվականներից սերտորեն կապված է եղել նաև Մայր Աթոռի հետ:

Գևորգ Զ Չորեքչյան հայրապետի կաթողիկոսական ընտրությունից հետո նա իր մասնակցությունն է բերել նորընտիր հայրապետի՝ Մայր Աթոռում և Հայաստանի տարբեր շրջաններում ծրագրած նորոգության աշխատանքներին, որոնք անհամեմատ մեծ ծավալ էին ստանալու երջանկահիշատակ Վազգեն Առաջինի գահակալության շրջանում:

1956 թ. Վ. Հարությունյանը ընդգրկվում է Ս. Էջմիածնի Մայր Աթոռի ճարտարապետական հանձնախմբի կազմում՝ 1972 թվականից դառնալով հանձնախմբի նախագահը:

Ի գնահատություն եկեղեցանվեր իր գործունեության 1997 թ. Վարազդատ Հարությունյանը պարգևատրվել է Հայոց եկեղեցու բարձրագույն՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով:

Մեծագույն շնորհ է և գիտության զարգացման խթան է, երբ խոշոր գիտնականը հնարավորություն է ունենում տևականորեն գործելու: Նա իմաստնացած, մեծ կենսափորձով ու գիտական ներուժով առլեցուն նկատելի հետք է թողնում: Ակադեմիկոս Վարազդատ Հարությունյանի դեպքում էլ տարիները որակ են, ձեռքբերումներ, վաստակը՝ պատկառելի, ծանրակշիռ, հետքը՝ լուսավոր, չխամրող, հիշատակը՝ անմահ, հավերժող:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի: